ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ.

ԵՊԼՀ ռեկտոր

պրոֆ. Ս.Զոլյան

ԿԱՐԳ

ԵՊԼՀ Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի կողմից մատուցվող կրթական ծառայությունների տեսակների և դրանց դիմաց գանձվող վարձավճարների չափերի

1. Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի (այսուհետ՝ ԵՊԼՀ ԼՇԿ) կողմից մատուցվող կրթական ծառայությունների տեսակներն են.

   1.1. *Բազմաշրջափուլ դասընթացի իրականացում (մեկ ամիս և ավելի)*

   1.2. *Կարճաժամկետ թեմատիկ դասընթացի իրականացում (մինչև մեկ ամիս տևողությամբ)*

   1.3. *Բազմաշրջափուլ դասընթացի առանձին շրջափուլի (մակարդակի) կամ կարճաժամկետ թեմատիկ դասընթացի ավարտական չափանիշների համապատասխան ստուգման կամ թեստավորման անցկացում:*

2. 2011 թ. հուլիսից սահմանել ԵՊԼՀ ԼՇԿ կողմից մատուցվող կրթական ծառայությունների դիմաց գանձվող հետևյալ հենքային սակագները՝

   2.1. Բազմաշրջափուլ դասընթաց՝ ամսական 20000 դրամ

   2.2. Կարճաժամկետ թեմատիկ դասընթաց՝ 10000 դրամ

2.3. Առանց դասընթացին հաճախելու ստուգման կամ թեստավորման կազմակերպում՝ դասընթացին մասնակցելու համար գանձվող վարձավճարի 50%-ը:

3. Հենքային սակագների հիման վրա սահմանել հետևյալ զեղչերը և հավելավճարները՝

3.1. ԵՊԼՀ ուսանողների և դասախոսների համար՝ հենքային սակագնի զեղչում 50%-ի չափով.

3.2. Անհատական եղանակով կամ փոքրաթիվ խմբերով պարապմունքները կազմակերպելու պարագայում՝ հենքային սակագնին հավելում 25%-ի չափով (ԵՊԼՀ ուսանողների և դասախոսների համար՝ զեղչված սակագնի համեմատ):

4. Կազմակերպությունների կողմից պատվիրված դասընթացների կազմակերպման պարագայում վարձավճարները սահմանել ըստ կնքվող պայմանագրում համաձայնեցված պայմանների:

5. Դասավանդող դասախոսի վարձատրման չափը սահմանել խմբի կամ անհատ սովորողի վարձավճարի 50%-ը՝ առանց զեղչերի հաշվարկման:

Հաստատված է ռեկտորատի 23.06.2011թ. Հ 32 նիստով